ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 751-Ա

<<04>> սեպտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՆՉԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մուշեղ Գևորգի Գրիգորյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին ներկայացված 2024 թվականի սեպտեմբերի 02-ի դիմումը:

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Սառնաղբյուր բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 24.05.1991 թվականի թիվ 1 որոշումից քաղվածքը և հաշվի առնելով որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայր, 10-րդ փողոց թիվ 8 բնակելի տուն հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակության բնակելի տունը, անասնաշենքը, պարիսպները և շվաքարանները՝ կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-100-0024-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում.

որոշում եմ՝

1. Վերականգնել գույքային իրավունքները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Սառնաղբյուր բնակավայրի 10-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող

08-100-0024-0001 կադաստրային ծածկագրով **0,31** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ որը ըստ որակավորում ունեցող լիցենզավորված մասնագետի կողմից կազմված չափագրման նյութերի փաստացի կազմում է **0,30254** հեկտար և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ ճանաչել՝ Մուշեղ Գևորգի Գրիգորյանի /ծնված 24.09.1973 թվականին, նույնականացման քարտ 009061748, տրված 022-ի կողմից 03.02.2018 թվականին/, Մարգարիտ Կարապետի Գրիգորյանի /ծնված 08.10.1947 թվականին, նույնականացման քարտ 010014314, տրված 022-ի կողմից 20.01.2018 թվականին/, Մարինե Գևորգի Գրիգորյանի/ ծնված 22.10.1967 թվականին, անձնագիր AP0626074, տրված 057-ի կողմից 14.11.2016 թվականին/, Արուսյակ Ռազմիկի Գրիգորյանի /ծնված 01.04.1975 թվականին, անձնագիր AU0520538, տրված 23.11.2021 թվականին 022-ի կողմից/, Արա Գևորգի Գրիգորյանի /ծնված 12.09.1970 թվականին, անձնագիր AT0653234, տրված 03.02.2021 թվականին, 022-ի կողմից/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասում առկա են ինքնակամ շինություններ, որոնք չեն հաշվառվել սահմանված ժամկետներում և ենթակա չեն օրինականացման:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<04>> սեպտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ